Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-232[86]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ պարբերությամբ.

«Սույն օրենքը սահմանում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի կայացրած որոշման կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով սույն օրենքի նորմերը իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են այդ որոշումների կատարման նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) քրեական գործերով դատարանի դատավճիռները և որոշումները՝ գույքի արգելադրման, դատական տուգանքի, գույքային հայցի, պատճառված վնասի հատուցման, հաշտության համաձայնության, գրավը պետության եկամուտ դարձնելու, ինչպես նաև գույքի բռնագրավման և գույքային բռնագանձումների (այդ թվում տուգանքը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքում) մասով.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետով.

«13) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին պարբերությունը ««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով հարկադիր կատարման ուղարկելու մասին դիմումը» բառերից հետո լրացնել «, գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը հարկադիր կատարման ուղարկելու վերաբերյալ դիմումը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության «համայնքը» բառից հետո « կամ» բառը փոխարինել «,» կետադրական նշանով, «օտարերկրյա պետությունը» բառերից հետո լրացնել « կամ միջազգային կազմակերպությունը,» բառերը, « և վարչական գործերով դատական» բառերը փոխարինել «, վարչական և քրեական գործերով դատական (վարութային)» բառերով, իսկ «եթե դատական ակտի համաձայն՝» բառերից հետո «դատական» բառը փոխարինել «դատական (վարութային)» բառերով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2[1]-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Միջազգային կազմակերպությունը կատարողական վարույթին մասնակցում է իր մարմինների կամ պաշտոնատար անձանց միջոցով, որոնք գործում են միջազգային իրավունքի նորմերով սահմանված կամ միջազգային կազմակերպության կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմաններում, կամ ներկայացուցիչների միջոցով: Միջազգային կազմակերպության անունից հանդես եկող անձինք պարտավոր են ունենալ իրենց պաշտոնեական կարգավիճակը կամ լիազորությունները հավաստող փաստաթղթեր:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում «Իրավաբանական անձի» բառերից հետո լրացնել « կամ միջազգային կազմակերպության» բառերը:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 11-րդ մասում « և վարչական գործերով դատական» բառերը փոխարինել «, վարչական և քրեական գործերով դատական (վարութային)» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին մասով.

«11.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի օգտին քրեական վարույթով տուգանքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթը, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակում սույն օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից որպես պահանջատեր լիազորված է հանդես գալ պրոբացիայի պետական ծառայությունը, տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.2-րդ մասով.

«11.2. Դատարանի վարույթում գտնվող քրեական գործով գրավը պետության եկամուտ դարձնելու վերաբերյալ կատարողական թերթը, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակում սույն օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից որպես պահանջատեր լիազորված է հանդես գալ դատախազությունը, տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:».

4) 13-րդ մասում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածը տարածվում է նաև քրեական վարույթի շրջանակներում կայացված դատական ակտերի նկատմամբ:»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31.4-րդ հոդվածով.

«**Հոդված 31.4. Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը**

1. Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը հարկադիր կատարման ուղարկելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է որոշման համար սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկվելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու պահից մեկամսյա ժամկետի ընթացքում: Դիմումը սույն մասով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացվելու դեպքում հարկադիր կատարողը կայացնում է այն դատախազին վերադարձնելու մասին որոշում՝ դիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

2.Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը հարկադիր կատարողը վերադարձնում է դատախազին, եթե դրան կցված չեն գրավը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշման պատճենը, գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը, այդ որոշումը մեղադրյալին և գրավը մուծած անձին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ուղարկելը հաստատող ապացույցը, ինչպես նաև այդ որոշման՝ օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկված լինելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու մասին գրավոր հավաստումը:

3. Դիմումը վերադարձնելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

4. Դիմումը դատախազին վերադարձնելն արգելք չէ թույլ տրված խախտումները վերացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում այն նորից կատարման ներկայացնելու համար:»:

Հոդված 10. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ կետով.

«11) պարտապանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել է գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը:»:

Հոդված 11. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կամ կատարողական մակագրության թերթը վերադարձնելու» բառերը փոխարինել «, կատարողական մակագրության թերթը կամ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը վերադարձնելու» բառերով:

Հոդված 12. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետում «վարչական ակտի կատարման վերաբերյալ գրության» բառերից հետո «կամ կատարողական» բառերը փոխարինել «, կատարողական» բառերով, իսկ «կատարողական թերթի պահանջների» բառերից հետո լրացնել « կամ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումի» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17-րդ կետ.

«17) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը փաստացի կատարվել է կամ այն վերացվել է:»:

Հոդված 13. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) քրեական գործերով հարկադիր կատարման ենթակա դատական ակտը կատարելու դեպքում.»:

Հոդված 14. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից «Եթե գույքի վրա արգելանք է դրվել դատավճռով գույքը բռնագրավելու կապակցությամբ, ապա որպես պատասխանող ներգրավվում են դատապարտյալը և համապատասխան ֆինանսական մարմինը:» նախադասությունը հանել.

2) լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում քրեական գործերով արգելանքի տակ գտնվող գույքի վրա:»:

Հոդված 15. Օրենքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հարկադիր կատարողի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրա դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք տալու, ինչպես նաև նշված անձանց մասին արատավորող կամ իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու գործողությունները՝ կապված օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես հարկադիր կատարող կամ նրա մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ առաջացնում է քրեական պատասխանատվություն: Այդ դեպքերում միջնորդություն է ներկայացվում դատախազություն՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:»:

Հոդված 16. Օրենքի 73.1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքների ուժի մեջ մտնելու օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-232[86]-11.04.2022-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-232[86]-11.04.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ~~պարբերությամբ~~՝ 8-րդ պարբերությամբ.

«Սույն օրենքը սահմանում է նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան՝ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի կայացրած որոշման կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով սույն օրենքի նորմերը իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են այդ որոշումների կատարման նկատմամբ :»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) քրեական գործերով դատարանի դատավճիռները և որոշումները՝ գույքի արգելադրման, դատական տուգանքի, գույքային հայցի, պատճառված վնասի հատուցման, հաշտության համաձայնության, գրավը պետության եկամուտ դարձնելու, ինչպես նաև գույքի բռնագրավման և գույքային բռնագանձումների (այդ թվում տուգանքը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքում) մասով.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետով.

«13) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին պարբերությունը ««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով հարկադիր կատարման ուղարկելու մասին դիմումը» բառերից հետո լրացնել «, գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը հարկադիր կատարման ուղարկելու վերաբերյալ դիմումը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ պարբերության «համայնքը» բառից հետո « կամ» բառը փոխարինել «,» կետադրական նշանով, «օտարերկրյա պետությունը» բառերից հետո լրացնել « կամ միջազգային կազմակերպությունը,» բառերը, « և վարչական գործերով դատական» բառերը փոխարինել «, վարչական և քրեական գործերով դատական (վարութային)» բառերով, իսկ «եթե դատական ակտի համաձայն՝» բառերից հետո «դատական» բառը փոխարինել «դատական (վարութային)» բառերով:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2[1]-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Միջազգային կազմակերպությունը կատարողական վարույթին մասնակցում է իր մարմինների կամ պաշտոնատար անձանց միջոցով, որոնք գործում են միջազգային իրավունքի նորմերով սահմանված կամ միջազգային կազմակերպության կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմաններում, կամ ներկայացուցիչների միջոցով: Միջազգային կազմակերպության անունից հանդես եկող անձինք պարտավոր են ունենալ իրենց պաշտոնեական կարգավիճակը կամ լիազորությունները հավաստող փաստաթղթեր:»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածում «Իրավաբանական անձի» բառերից հետո լրացնել « կամ միջազգային կազմակերպության» բառերը:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 11-րդ մասում « և վարչական գործերով դատական» բառերը փոխարինել «, վարչական և քրեական գործերով դատական (վարութային)» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին մասով.

«11.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի օգտին քրեական վարույթով տուգանքը բռնագանձելու վերաբերյալ կատարողական թերթը, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակում սույն օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից որպես պահանջատեր լիազորված է հանդես գալ պրոբացիայի պետական ծառայությունը, տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.2-րդ մասով.

«11.2. Դատարանի վարույթում գտնվող քրեական գործով գրավը պետության եկամուտ դարձնելու վերաբերյալ կատարողական թերթը, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակում սույն օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության անունից որպես պահանջատեր լիազորված է հանդես գալ դատախազությունը, տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:».

4) 13-րդ մասում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածը տարածվում է նաև քրեական վարույթի շրջանակներում կայացված դատական ակտերի նկատմամբ:»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31.4-րդ հոդվածով.

«**Հոդված 31.4. Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը ~~վերադարձնելը~~**

1. Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը հարկադիր կատարման ուղարկելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է որոշման համար սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկվելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու պահից մեկամսյա ժամկետի ընթացքում: Դիմումը սույն մասով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացվելու դեպքում հարկադիր կատարողը կայացնում է այն դատախազին վերադարձնելու մասին որոշում՝ դիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

2. Գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը հարկադիր կատարողը վերադարձնում է դատախազին, եթե դրան կցված չեն գրավը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշման պատճենը, գրավը պետության եկամուտ դարձնելու մասին որոշումը, այդ որոշումը մեղադրյալին և գրավը մուծած անձին ~~օրենքով~~ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ուղարկելը հաստատող ապացույցը, ինչպես նաև այդ որոշման՝ օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ ~~բողոքարկվելու~~բողոքարկված լինելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու մասին գրավոր հավաստումը:

~~2~~3. Դիմումը վերադարձնելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում՝ այն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

~~3~~4. Դիմումը դատախազին վերադարձնելն արգելք չէ թույլ տրված խախտումները վերացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում այն նորից կատարման ներկայացնելու համար:»:

Հոդված ~~5~~10. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ կետով.

«11) պարտապանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկել է գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը:»:

Հոդված ~~6~~11. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «կամ կատարողական մակագրության թերթը վերադարձնելու» բառերը փոխարինել «, կատարողական մակագրության թերթը կամ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումը վերադարձնելու» բառերով:

Հոդված ~~7~~12. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետում «վարչական ակտի կատարման վերաբերյալ գրության» բառերից հետո «կամ կատարողական» բառերը փոխարինել «, կատարողական» ~~կետադրական նշանով և բառով~~բառերով, իսկ «կատարողական թերթի պահանջների» բառերից հետո լրացնել « կամ գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը կատարելու վերաբերյալ դիմումի» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17-րդ կետ.

«17) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին դատախազի որոշումը փաստացի կատարվել է, կամ այն վերացվել է:»:

~~**Հոդված 8.** Օրենքի~~

Հոդված 13. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) քրեական գործերով հարկադիր կատարման ենթակա դատական ակտը կատարելու դեպքում.»:

Հոդված 14. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից «Եթե գույքի վրա արգելանք է դրվել դատավճռով գույքը բռնագրավելու կապակցությամբ, ապա որպես պատասխանող ներգրավվում են դատապարտյալը և համապատասխան ֆինանսական մարմինը:» նախադասությունը հանել.

2) լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածով սահմանված դրույթները չեն տարածվում քրեական գործերով արգելանքի տակ գտնվող գույքի վրա:»:

Հոդված 15. Օրենքի 72-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հարկադիր կատարողի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրա դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք տալու, ինչպես նաև նշված անձանց մասին արատավորող կամ իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու գործողությունները՝ կապված օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես հարկադիր կատարող կամ նրա մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ առաջացնում է քրեական պատասխանատվություն: Այդ դեպքերում միջնորդություն է ներկայացվում դատախազություն՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:»:

~~**Հոդված 9.**~~**Հոդված 16.** Օրենքի 73.1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքների ուժի մեջ մտնելու օրը: